

«ԱԶԳԱՅԻՆ ԼԵԳԵՈՆ»Ի ՊԱՏԱՆԻ ԿԱՄԱՎՈՐՆԵՐՈՒ ԱՅՑԸ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴ

Posted on May 10, 2023 by Keghart



Category: [Opinions](#)



Տեղեկատու, Երեւան, 24 Ապրիլ 2023

«Ազգային Լեգեոն» կամաւորական ջոկատը 44-օրեայ պատերազմին մասնակցեցաւ Քարվաճառի շրջանին մէջ: Պարտութենէն հաշուած շաբաթներ ետք, Լեգեոնին հրամանատարութիւնը, վերլուծելով իրադրութիւնը եւ խորհրդակցելով ջոկատի կազմին մէջ պատերազմին մասնակցած երկու սփիւռքահայերուն հետ, եկաւ այն եզրակացութեան, որ կորսնցուցած ենք ոչ թէ պատերազմը, այլ անոր փուլերէն ընդամենը մէկը, թէ նոր փուլը անխուսափելի է, ուստի պէտք է անոր շուտով պատրաստուիլ՝ առանց ժամանակը վատնելու հայկական միջավայրին մէջ



տարածուած փոխադարձ մեղադրանքներուն ու հայիոյանքներուն վրայ: ԳՈՐԾՆԱԿԱՆ ԳԵՏՆԻ ՎՐԱՅ ԱՆՅԱՊԱՂ ՊԱՏՐԱՍՏՈՒԻԼ ՆՈՐ ՓՈՒԼԻՆ -- ա՛յս եղաւ Ազգային Լեգեոնի հրամանատարութեան հաւատամքը:

Սփիւռքահայ անհատներու եւ կառոյցներու նիւթական ու բարոյական օժանդակութեամբ, պատանիներու եւ նորահաս երիտասարդներու պատրաստութիւնը մեծ թափ առաւ 2021-ի գարունէն սկսեալ: Առ այսօր, հազարէ աւելի կամաւորներ, հիմնականին մէջ 14-25 տարեկան, ռազմական, բժշկական առաջին օգնութեան եւ գաղափարական-հոգեբանական պատրաստութիւն ստացած են: Շուրջ 300 հոգի այս օրերուն կը շարունակեն մարզուիլ: Փափաքողներուն քանակը անհամեմատ մեծ է, յատկապէս ՀՀ-ի շրջաններէն, սակայն միջոցները թոյլ չեն տար ընդառաջել: Բոլոր մասնակիցներուն բոլոր կարիքները կը հոգայ Լեգեոնին հրամանատարութիւնը՝ բարերարներու տրամադրած գումարներով եւ իրեղէնով (զինուորական հագուստներ եւ

կօշիկներ, ուսումնական գէւքեր, հեռադիտակներ,
ԱԹՍ, Էլեկտրաձիւն շարժակ, միքրոօթոպիւս եւ այլն):



Այս տարի, Հայոց ցեղասպանութեան 108-րդ տարելիցին օրը՝ ապրիլի 24-ին, Ազգային Լեգեոնի դասընթացներուն հետեւող 170-է աւելի պատանիներ ու պարմանուհիներ բարձրացան Ծիծեռնակաբերդ եւ իրենց յարգանքի տուրքը մատուցեցին մեր Նահատակներու յիշատակին: Անոնք իրենց հրահանգիչ-մարզիչներով եկած էին Արարատի մարզի Մասիս, Վայոց Ձորի մարզի Ջերմուկ, Արագածոտնի մարզի Ապարան, Կոտայքի մարզի Բիւրեղաւան քաղաքներէն, նաեւ Երեւանէն: Երթելէկի, սնունդի, ծաղիկներու եւ այլ ծախսերը հոգացին անանուն բարերար մը Պէյրուզէն եւ ուրիշ սատարողներ ԱՄՆ-էն ու Գանատայէն:

Նոր արհաւիրքներէ մեր փրկութեան եւ նոր յաղթանակներու գրաւականը **համազգային ինքնապաշտպանութեան** անյապաղ պատրաստուիլն է:

There are no comments yet.